Հավելված 1՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու
2022թ. հոկտեմբերի 14-ի N 178-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2024ԹԹ. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Գյումրու ներհամայնքային երթուղային ցանցում շահագործվում են 9 միկրոավտոբուսային երթուղիներ՝ թվով 87 տրանսպորտային միջոցով, որոնց տարիքը՝ 5-ից ավել է: Կարելի է փաստել, որ Գյումրի համայնքում կանոնավոր ուղևորափոխադրումները չեն ապահովում տրանսպորտային ծառայությունների արդյունավետություն, իսկ տրանսպորտային անվտանգության, ծառայությունների սպասարկման և որակի, ինչպես էկոլոգիական տեսանկյունից չեն բավարարում ինչպես ՀՀ օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին, այնպես էլ միջազգային չափանիշներին:

Նշված իրավիճակը հիմնականում պայմանավորված է ներհամայնքային տրանսպորտային համակարգի ոչ բավարար ֆինանսավորմամբ կամ ֆինանսական արդյունավետ գործիքակազմի կիրառմամբ, ներհամայնքային տրանսպորտում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների պակասով, ինչպես նաև թերի վերահսկողությամբ: Այսպիսով՝ ներկայումս Գյումրու ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումները չեն բավարարում համայնքի բնակչության տրանսպորտային կարիքները:

Գյումրի համայնքում իրականացվող բարեփոխումների շրջանակներում, դեռևս 2020 և 2021 թվականներին համայնքը ձեռք է բերել թվով 66 «Գազել» մակնիշի միկրոավտոբուսներ, որոնցից 63-ը՝ 2021 թվականին: 2020 թվականին հաստատված, Գյումրու ներհամայնքային երթուղային ցանցով նախատեսված է թվով 85 տրանսպորտային միջոցների շահագործում:

Գյումրու համայնքապետարանը նպատակ է հետապնդում ներհամայնքային երթուղային ցանցը սպասարկել օպերատորի՝ համայնքային ենթակայության ընկերության միջոցով: Նշված նպատակին հասնելու համար ներկայումս Գյումրու համայնքապետարանի կողմից իրականացվում են համապատասխան աշխատանքներ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն ռազմավարության նպատակն է՝ Գյումրի համայնքում ներդնել արդյունավետ և բարձր արտադրողականությամբ ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանց՝ հիմքում դնելով անվտանգ,

էկոլոգիապես մաքուր և սպասարկման բարձր որակ ապահովող տրանսպորտային միջոցների շահագործման անհրաժեշտությունը:

Նշված նպատակին հասնելու համար առաջարկվում է՝

1. ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, հաշվի առնելով միջազգային փորձը, Գյումրի համայնքում իրականացնել ուղևորահոսքի ուսումնասիրություն: Ուղևորահոսքի ուսումնասիրության նպատակով, առաջարկել Գյումրի համայնքի ղեկավարին՝ ձևավորել հանձնաժողով: Նոր երթուղային ցանցի ձևավորման համար հիմք ընդունել գործող երթուղային ցանցը, փաստացի ուղևորահոսքը, համայնքի զարգացման հեռանկարը, համայնքի կապը այլ համայնքների, այլ մարզերի (Երևանի և այլ մարզկենտրոնների) հետ, ապահովելով՝ ուղևորների կուտակման և կլանման կետերի միջև արդյունավետ ուղևորափոխադրումներ:

Նախատեսվում է ուղևորահոսքի վերաբերյալ տվյալները քարտեզագրել, թվայնացնել և դրանց հիման վրա կազմել համայնքային երթուղիների չվացուցակները և ուղեգծերը: Համայնքային երթուղիների չվացուցակների և ուղեգծերի հաստատման գործընթացը ավարտելուց հետո դրանք նույնպես՝ թվայնացնել: Գյումրի համայնքում, կախված ուղևորահոսքի մեծությունից և ուղղություններից սահմանել երթուղային ցանցում շահագործման ենթակա տրանսպորտային միջոցների քանակը (փոխադրումների ծավալին համապատասխան) և տիպը (ներառյալ՝ տեղատարողությունը):

Համայնքի երթուղային ցանցում շահագործման ենթակա տրանսպորտային միջոցների ընտրության նպատակով սահմանել ՀՀ օրենսդրությամբ դրանց ներկայացվող պարտադիր պայմանները, պահանջները և համայնքի կողմից հեռանկարային զարգացման ծրագրերին համապատասխան լրացուցիչ պահանջներ:

Միջոցառման արդյունքում համայնքում կապահովվի սակավաշարժ և հաշմանդամություն ունեցող քաղաքացիների ընդհանուր օգտագործման տրանսպորտից անխոչընդոտ երթևեկելու հնարավորությունը՝ կնախատեսվի շահագործել հաշմանդամների, սայլակով երեխաների, տեսողական և լսողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված ավտոբուսներ:

Կսահմանվեն համայնքային երթուղիները, որոնք կշահագործվեն համայնքի կողմից կամ համայնքի կողմից պատվիրակված՝ մասնավոր փոխադրողի կողմից: Այն ներհամայնքային երթուղիների համար, որոնք նախատեսվում են շահագործվել համայնքի կողմից՝ փոխադրավարձի հաշվարկման մեթոդաբանության հիման վրա, համայնքի ավագանու կողմից կսահմանվի փոխադրավարձը:

Կձևավորվի համայնքային ենթակայության կազմակերպություն՝ օպերատոր, որը կսպասարկի ներհամայնքային երթուղիները: Այն երթուղիները, որոնք պետք է սպասարկվեն մասնավոր փոխադրող կազմակերպությունների կողմից, դրանց համար կմշակվեն մրցութային փաթեթներ և մրցույթի անցկացման ժամանակացույց:

Նախատեսվում է համայնքում երթուղային ցանցի ձևավորման աշխատանքների ժամանակ (նաև հետագայում երթուղային ցանցում իրականացվող

փոփոխությունների ժամանակ), ուսումնասիրությունների փուլում, հանրային քննարկումների միջոցով, ապահովել համայնքի բնակիչների բարձր ներգրավվածություն:

2. Գյումրի համայնքում կներդրվի ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումների միջազգային չափանիշներին համապատասխան տոմսային համակարգ, որը կապահովի ինչպես համայնքի կողմից շահագործվող երթուղիներում այնպես էլ մասնավոր՝ համայնքի կողմից մասնավոր փոխադրողին պատվիրակված երթուղիներում տոմսերի վաճառքի, ճանաչման և տոմսերի վաճառքից գեներացված գումարների համապատասխան վերաբաշխման հնարավորություն:

Ներդրվող տոմսային համակարգը հնարավորություն կունենա սահուն կերպով ինտեգրվելու հանրապետությունում նախատեսվող միասնական տոմսային համակարգին: Կքննարկվի տոմսային համակարգի ներդրման տարբեր մեխանիզմներ՝ հիմքում դնելով միասնական տոմսի սկզբունքը, ինչպես նաև կարևոր գործոն կհանդիսանա ճկուն զեղչային համակարգի ձևավորումը:

Տոմսային համակարգի ներդնումը կպահանջի վերանայել անվճար կամ զեղչ սակագներով ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումներից փոխադրվելու արտոնություն ունեցող քաղաքացիների տոմսային համակարգում երթևեկելու ներկայումս գործող կարգավորումները: Տոմսային համակարգի ներդրման աշխատանքներին զուգահեռ կներդրվի Գյումրի համայնքում երթուղային ցանցի շահագործման ֆինանսական մուտքերի և ելքերի թափանցիկ գործիքակազմ:

3. Կմշակվի համայնքում ընդհանուր օգտագործման տրանսպորտում շահագործման ենթակա էկոլոգիապես մաքուր ավտոբուսների տեխնիկական բնութագիրը և կներկայացվի դրանց շահագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման վերաբերյալ առաջարկություն: Գյումրի համայնքի երթուղային ցանցը սույն ծրագրի շրջանակներում կհամալրվի էլեկտրական ավտոբուսներով:

4. Ընդհանուր օգտագործման տրանսպորտում էկոլոգիապես մաքուր վառելիքով շահագործվող տրանսպորտային միջոցների կիրառումը դրական ազդեցություն կթողնի արտանետումների կրճատման վրա: Սակայն միայն կանոնավոր ուղևորափոխադրումներում էկոլոգիապես մաքուր վառելիքով տրանսպորտային միջոցների շահագործումը դեռևս բավարար չէ որպեսզի համայնքում տրանսպորտային արտանետումների կրճատումը հասցվի նվազագույնի: Արտանետումների էական կրճատում հնարավոր կլինի արձանագրել արդյունավետ, բարձր արտադրողականությամբ, սպասարկման բարձր որակ ունեցող և անվտանգ ընդհանուր օգտագործման տրանսպորտի առկայության պայմաններում, քանի որ տվյալ դեպքում քաղաքացիների մոտ կտրուկ կբարձրանա կանոնավոր ուղևորափոխադրումների նկատմամբ գրավչությունը և վստահությունը:

Նշված միջոցառման արդյունքում քաղաքացիները կսկսեն երթևեկել ընդհանուր օգտագործման տրանսպորտով՝ մի կողմից ավելի բարձրացնելով կանոնավոր ուղևորափոխադրումների արդյունավետությունը (ավելացնելով ուղևորահոսքը), մյուս կողմից կրճատելով սեփական մեքենաների և տաքսիների

օգտագործումը, ինչն էլ իր հերթին առաջ կբերի ճանապարհա-տրանսպորտային խցանումների նվազեցմանը (նաև ճանապարհա-տրանսպորտային պատահարների կրճատմանը, այսինքն՝ մարդկանց կյանքի և առողջության պահպանմանը), համապատասխանաբար էականորեն կկրճատվի արտանետվուղ գազերի քանակը:

Միաժամանակ համայնքում էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոցների շահագործման նպատակով անհրաժեշտ է ներդնել համապատասխան ենթակառուցվածքներ, հաշվի առնելով համայնքում էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոցների հետագա աճը: Հետևաբար կուսումնասիրվի Գյումրի համայնքում տրանսպորտային արտանետումների ընդհանուր ֆոնը և դրանց կրճատման նպատակով, հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, կներկայացվի տրանսպորտային արտանետումների կրճատմանն ուղղված կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների ծրագիր:

5. Գյումրի համայնքում կանոնավոր փոխադրումները առավել անվտանգ դարձնելու նպատակով առաջարկվում է՝ հստակ կանոնակարգել՝

1) «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» Համաձայնագրի և «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան ներհամայնքային երթուղային ցանցերում աշխատող վարորդների աշխատանքի և հանգստի ռեժիմը՝ կիրառելով նաև հսկողության տեխնիկական միջոցներ,

2) վարորդների պարբերաբար և ամենօրյա նախաուղերթային բժշկական զննման գործընթացը,

3) տրանսպորտային միջոցների նախաուղերթային տեխնիկական զննման գործընթացը,

4)տրանսպորտային միջոցների պահպանումը, տեխնիկական սպասարկումները, ընթացիկ ու հիմնական նորոգումները և այդ աշխատանքների կատարման հաշվառման գործընթացները:

6. Ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների կառավարման և սպասարկման որակի բարելավման նպատակով կառաջարկվի ներդնել ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնք միտված կլինեն Գյումրի համայնքում երթակարգավարական ծառայությունները էլեկտրոնային եղանակով մատուցելուն և ներհամայնքային երթուղային ցանցի էլեկտրոնային հավելվածների (ինտերակտիվ քարտեզների) ձևավորմանը: Կձևավորվեն այնպիսի համակարգեր, որոնք հետագայում սահուն կերպով կինտեգրվեն հանրապետությունում նախատեսվող նմանատիպ համակարգերին:

7. Երթուղային ցանցի շահագործման բարձր արդյունավետություն ապահովելու նպատակով անհրաժեշտություն կառաջանա կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների հնարավորինս անխոչընդոտ երթևեկության ապահովում, դրանց երթևեկության կանոնակարգում, երթևեկության արագությունների սահմանում:

Կանոնավոր ուղևորափոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցների երթևեկության պայմանների և պահանջների ճշգրիտ պաշտպանությունը

առաջ կբերի ընդհանուր օգտագործման տրանսպորտում էներգախնայողության, համապատասխանաբար՝ արտանետումների կրճատմանը:

8. Գործընթացի ամբողջ ընթացքում Գյումրու համայնքապետարանում աշխատող ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառի համայնքային ծառայողների, փոխադրումների իրականացման գործընթացում ներգրավված և ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումները սպասարկող կազմակերպությունների աշխատակիցների համար կիրականացվի համայնքային ծառայողների մասնագիտական կարողությունների բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

Միջոցառումները ուղղված կլինեն տրանսպորտի բնագավառում իրավական ակտերի և տեխնիկական կանոնակարգերի, փոխադրումների կազմակերպման և կառավարման միջազգային փորձի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը, ինչպես նաև պրակտիկ փորձ ձեռք բերելու նպատակով կապահովվի շահառուների մասնակցությունը ծրագրի իրականացման բոլոր փուլերում:

Կմշակվեն Գյումրու բնակիչների (ուղևորների) համար ներհամայնքային կանոնավոր փոխադրումներից օգտվելու վերաբերյալ տեղեկատվական նյութեր, մասնավորապես՝ ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումներից օգտվելու, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման, ուղևորների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Միջոցառումների իրականացման արդյունքում, Գյումրի համայնքում կներդրվի, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված և միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան երթուղային ցանց, որը կլինի առավել անվտանգ, կապահովի սպասարկման բարձր որակ և միտված կլինի կրճատելու՝ տրանսպորտային արտանետումները;

Իրականացվող միջոցառումների արդյունքում հնարավոր կլինի՝

1) համայնքի տարբեր թաղամասերում բնակվող քաղաքացիների համար ուղևորափոխադրումները դարձնել հասանելի, ներառյալ՝ ոչ խիտ բնակեցված թաղամասերը,

2) կանոնավոր ուղևորափոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցները համապատասխանեցնել փաստացի ուղևորահոսքի ծավալներին ինչի արդյունքում կբացառվի տրանսպորտային միջոցների թերծանրաբեռնվածությունը, համապատասխանաբար շահագործվող երթուղիները կդառնան տնտեսապես հիմնավորված, իսկ ուղևորի համար՝ կբացառվի տրանսպորտային միջոցի գերծանրաբեռնվածությունը, ինչ էլ կապահովի սպասարկման որակի և անվտանգության բարձր մակարդակ,

3) կրճատել ուղևորության վրա ծախսվող ժամանակահատվածը,

տեղեկատվական տեխնոլոգիաների առավել համապարփակ կիրառմամբ, մի կողմից բարձրացնել ներհամայնքային կանոնավոր փոխադրումների նկատմամբ հսկողությունը, իսկ մյուս կողմից էականորեն բարելավել սպասարկման որակը և արդյունավետությունը,

4) ներդնելով տոմսային համակարգ ապահովել հավաքագրվող գումարների և ծախսերի բավարար մակարդակ,

5) ձևավորել համապատասխան տրանսպորտային ենթակառուցվածքներ,

իրականացնել համայնքում տրանսպորտային արտանետումների վերահսկողություն և կրճատմանն ուղղված միջոցառումներ,

6) բարձրացնել աշխատակիցների մասնագիտական ունակությունները,

7)բարձրացնել քաղաքացիների ներգրավվածությունը և տեղեկացվածությունը:

Հավելված 2՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու
2022թ. հոկտեմբերի 14-ի N 178-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2024ԹԹ. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

N		ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԵՎ ԵՆԹԱՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ
1		Ներհամայնքային տրանսպորտի բնագավառը կանոնակարգող ՀՀ ներպետական և միջազգային օրենսդրության և իրավակիրառական պրակտիկայի վերլուծություն ու համապատասխան առաջարկությունների ներկայացում	մինչև 20.11.2022թ.
2		Գյումրի համայնքում նոր երթուղային ցանցի ձևավորում	մինչև 31.03.2023թ.
	1	Գյումրի համայնքում ուղևորահոսքի ուսումնասիրություն Ուղևորահոսքի ուսումնասիրություն իրականացնելու նպատակով իրավական կանոնակարգման վերաբերյալ առաջարկության ներկայացում:	մինչև 31.08.2022թ.
	2	Ուղևորահոսքի ուսումնասիրություն	մինչև 31.09.2022թ.
	3	Ուղևորահոսքի տվյալների վերլուծություն	մինչև 30.11.2022թ.
	4	Երթուղիների չվացուցակների և ուղեգծերի կազմման գործընթաց	մինչև 20.02.2023թ.
3		Գյումրի համայնքում ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումների տոմսային համակարգի ներդնում	մինչև28.12.2023 թ.
	1	Տոմսային համակարգի ներդրման տեխնիկական պայմանների մշակում	մինչև 31.07.2022թ.
	2	Գյումրի համայնքում ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումներում տոմսային համակարգի ներդրման համար օպերատորի ընտրություն	մինչև 28.12.2022թ.
4		Գյումրիհամայնքումտրանսպորտային արտանետումների կրճատմանն ուղղված միջոցառումների իրականացում	մինչև 30.06.2023թ.
	1	Գյումրի համայնքում էկոլոգիական վիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրում՝ մասնավորապես համայնքներում տրանսպորտայի միջոցների (կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների) շահագործման արդյունքում մթնոլորտային ավազան արտանետվող գազերի տեսակների և դրանց քանակի վերաբերյալ	մինչև 31.03.2023թ.

	2	Գյումրի համայնքում մթնոլորտային ավազան ավտոտրանսպորտից արտանետվող գազերի քանակը կրճատելու վերաբերյալ կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների ծրագրի ներկայացում	մինչև 30.06.2023թ.
	3	Գյումրի համայնքում ներհամայնքային երթուղիների շահագործման համար անհրաժեշտ էկոլոգիապես մաքուր վառելիքով շահագործվող ավտոբուսների տեխնիկական բնութագրերի մշակում	մինչև 31.07.2022թ.
5		Գյումրի համայնքում նոր ձևավորված երթուղային ցանցի հիման վրա կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրությանն ուղղված միջոցառումների իրականացում	մինչև 30.11.2022 թ.
	1	ներհամայնքային երթուղիները սպասարկող համայնքային ենթակայության կազմակերպության՝ օպերատորի ձևավորմանը ուղղված միջոցառումների իրականացում	մինչև 31.10.2022 թ.
	2	Ներհամայնքային կանոնավոր երթուղիներում փոխադրավարձի սահմանման իրավական կանոնակարգման վերաբերյալ առաջարկության ներկայացում	մինչև 30.11.2022 թ.
6		Գյումրի համայնքում ներհամայնքային ուղևորափոխադրումների իրականացման գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում	մինչև 30.11.2023թ.
	1	Ներհամայնքային ուղևորափոխադրումներում երթակարգավարական ծառայությունները էլեկտրոնային եղանակով մատուցող կազմակերպության ձևավորում	
	2	Ներհամայնքային երթուղային ցանցերի էլեկտրոնային հավելվածների (ինտերակտիվ քարտեզներ) ներդնում	
7		Գյումրու ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումների համար ուսումնական նյութերի մշակում	մինչև 20.12.2023թ.
	1	Գյումրու համայնքապետարանում աշխատող ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառի համայնքային ծառայողների և փոխադրող կազմակերպությունների աշխատակիցների համար մասնագիտական կարողությունների բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	Պարբերաբար 2022-2023թվականների ընթացքում
	2	Գյումրու բնակիչների (ուղևորների) համար ներհամայնքային կանոնավոր փոխադրումներից օգտվելու վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակում	մինչև 20.12.2023թ.
8	1	Պետություն-համայնքհամագործակցությանշրջանակներումԳյումրիհամայնքիտրանսպորտայինպարկիհամալրում՝սուբվենցիոնծրագրիմիջոցով: Գյումրիհամայնքիհամաֆինանսավորմամբևպետությանկողմիցսուբվենցիայի(նպատակայինդրամաշնորհ)տրամադրմամբ՝թվով20 ավտոբուսների(20-22 տեղանոց) ձեռքբերում:	մինչև2023թվականիդեկտեմբեր